

Մակարեան Ա. Յ., Յուշադիրք թրակիոյ եւ Մակեդոնիոյ հոյ դադութներու (գրախօսած Հ. Ն. Ակինեան). 304:

Mandelstam André N., Das armenische Problem im Lichte des Völker- und Menschenrechtes (գրախօսած Հ. Վ. Փունկուզ). 558:

Փաշանեան, Ռոտոսթոյի Հայերը (գրախօսած Հ. Ն. Ակինեան). 714:

Գրատէրին տեղեկատու. ցուցակ 1930 տարւոյ հայերէն եւ հայագիտական հրատարակութիւններու. 569, 665, 717:

Makarjian A. J., Die armenische Kolonie von Thrazien und Makedonien (besprochen von P. N. Akinian). 304.

Mandelstam André N., Das armenische Problem im Lichte des Völker- und Menschenrechtes (besprochen von P. V. Pounkouz). 558.

Pačac'ian, Die Armenier von Rodosto (besprochen von P. N. A.). 714.

Literarischer Anzeiger für das Jahr 1930. 569, 665, 717.

**Թ Ա Ղ Կ Ե Փ Ո Ի Ն Զ**

Բէր-Չօրեան Տիգ. Թագուհի Նկարչուհի. 125:

Գուշակեան Թորգոմ Եղ. Պատրիարք Երուսաղէմի. 445:

Երզա Նիկողայոս. 378:

Թօզաթեան Արմէն. 561:

Լէման-Հաուարի ծննդեան 70ամեակը. 124:

Խանգատեան Չ. եւ Վենիզելոս. 125, 563:

Խաչատրեան Ս. Նկարիչ. 381:

Կիւլէսէրեան Բարդէն Եղ. Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ. 455:

Կոմիտաս վարդապետի 60ամեակը. 446:

Կտակ մը ի նպաստ Երեւանի Համալսարանին. 314:

Հայ Ազգազբաղան Ընկերութիւն մը եւ Ազգազբաղան Հանդէս մը անհրաժեշտ է. 379:

Հայ արուեստագէտներու ցուցահանդէսը Սէվրի մէջ. 448:

Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան 25ամեակը. 382:

Հայ Խեցեգործութիւնը Պարիսի Գաղթային ցուցահանդէսին մէջ. 564:

Հայ Մշակոյթի Բարեկամներու Ընկերակցութիւնը. 126:

Հայագիտութիւնը Պրագի Համալսարանին մէջ. 125:

Հայկական հնութիւններ Սինայի լեռան Ս. Կատարինէի վանքին մէջ. 380:

Հայր եւ Որդի Պետրոսեանները. 313:

Ղազիկեան Հ. Արսէն՝ անդամ Վենետիկի Գիտութեան Գրականութեան եւ Արուեստի Կաճառին. 446:

Մէլգուրեան Ալիս. 563:

Նահատակ դրաղէտներու բարեկամներ. 311:

Նէօլոգիկէ Թէոդոր †. 125:

Շահին Էտկար. 125:

Ուսուցչապետ Մակլէր Բուլղարիոյ մէջ. 562:

Պարսկական արուեստի ցուցահանդէսը. 126:

Պոստրեան Օր. Մարի. 564:

Սօս Մելիք. 381:

Տէր-Ներսէսի Օր. Սիրարբի. 125, 380:

Քէլէկեան Տիգրան Խան. 564:

Caucas ... 310:

Société des Etudes arméniennes. 124:



**ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԷՐԱԵԱՆ**

ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԵՏՐՈՍԻ ԸՆՆՆ ԿՈՂՄԻՏԵ

Հնչեց Տիգրիսի ափունքէն թօթաքեր այժմը, թէ հանգեալ ի Տէր Դեկտ. 15ին Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեան: Գերերջանիկ Հոգեւոր Տէրն անցեալ մարտին մեկուսացած էր Հոռմ եւ Յունիսին ներկայացուցած Ս. Գահին իւր հրաժարականը կաթողիկոսական-պատրիարքական աթոռէն: Կապէր հոն անդորրութեան մէջ՝ յանձնուած բժշկական խնամոց: Սրտի հինաւուրց տկարութիւն մը, որ բունած էր իր մէջ, կ'ընկճէ զինքն այժմ՝ ի մահ:

Ծնած է Թէրզեան ի Կուտինա (Բէօթարեա) Փոնիգացոց, 12 Սեպտեմբեր (20 Օգոստ. հ. տ.) 1855: Եկեղեցական ուսումներն առած ի Հոռմ Ուրբանեան վարժարանին մէջ, կ'ընդունի 1883ին քահանայական ձեռնադրութիւնն եւ կը վերադառնայ հայրենիք, գործելու իւր ժողովրդեան մէջ: 18 Սեպտ. 1892ին կը քարձրացնէ զինքը Ստեփանոս Պետրոս Ժ. Ազարեան եպիսկոպոսութեան՝ յանձնելով իր հովուապետութեան Ատանայի թեմը: Կը քարգաւաճէ հոս արդիւնաւէտ գործունէութիւն մը մինչեւ 1910, Ապրիլ 23, երբ կը հռչակուի յաջորդ Պօղոս Պետրոս ԺԲ. Սապաղեանի կաթողիկոսական-պատրիարքական Աթոռին վրայ ի Կ. Պոլիս (օծուած 26 Յունիս 1910):

Երբ հովուապետն էր Ատանայի թեմին, ունեցաւ Թէրզեան ժիր գործունէութիւն մը. հիմնեց Դպրոց, Եկեղեցի մը աշխատեցաւ թեմին զարգացման: Բայց հազիւ սկսած էր պտղաբեր ըլլալ իւր աւարներու քրտնաջան աշխատութիւնը, երբ կուտակուեցան միլիարներ ամսերն Ատանայի վրայ (1909, Ապրիլ 1—3) եւ ի թիւն ահաւ ոչնչացուցին ինչպէս ժողովուրդը նոյնպէս կրթական հիմնարկութիւնները. անոնք զոհ գացին վայրագ կոտորածի:

Ազգասէր եւ ազգանուէր ոգին, զոր ի հանդէս բերած էր Թէրզեան իւր այս գործունէութեան ընթացքին, եղաւ որդիչ պատճառը հաւաքելու իւր շուրջը ընտրական ժողովին ձայները:

Կաթողիկոսական-պատրիարքական գործունէութեան քսանամեայ ժամանակամիջոցին տեղի ունեցան քաղաքական անսախատեալ յեղափոխութիւններ այն միջավայրին վրայ, ուր ասպարէզն էր Թէրզեանի գործունէութեան: Ծանւ ազգային արտաքին եւ ներքին կեանքն ապրեցաւ կնճիղներ: Կը պահանջէր բազմադորդ ժամանակը հայրապետական աթոռին վրայ աւելի քաղաքագէտ, աւելի վարչագէտ,

հեռատեսու եւ դիւրամատոյց հովուապետ մը, գտնելու համար յաջող ելք այն ամպա-  
մած հորիզոնին տակ, ուր մըրիկը եւ արհաւիրք կ'իշխէին:

Պէտք էր յառաջադէմ ընթանալ, քայց առանց ոստումի: Պէտք էր ճնշել  
դարերու գեղձումները, քայց յարգելով հինը, ազգայինը, աւանդականն եւ հաշտ  
անոնց հետ կոխել նոր ուղին: Յաջողութիւնն որսալու համար հարկաւոր էր սանձել  
սեպհական ձգտումներու թռիչքը: Եւ եթէ քարեձուլութիւնը հասարակութեան քարե-  
լաւումը կը դիտէր, հարկ էր որ կերպն ալ ժողովրդեան հեշտընկալ եւ փարելի  
ըլլար: Թէրգեան համարեցաւ թէ կարելի է ճոխութեամբ հարթել ամէն դժուար-  
ութիւն: Սուրբ էր անշուշտ նպատակը, գովելի բունն եռանդը, քայց աննպաստ  
էր ժամանակը, անընտելական միջոցները:

Յաջողութեց համաշխարհական պատերազմը, որ հարուածեց չարաչար ինչպէս  
համօրէն հայութիւնն, նոյնպէս կաթողիկէ հայ ժողովուրդը. թեմերը ընաջնջուեցան  
ըստ մեծի մասին: Արիւնեցաւ Հովուապետին սիրտը, լացաւ անթիւ հովուակիցներու,  
որդոց եւ դստերաց կտտամահ կորուստը:

Ժամանակի պարագաներու տակ զգաց ինքզինքը ստիպուած յանձնել հօտն  
պատրիարքական փոխաւորդներու խնամքին եւ առանձնանալ Հոռոմ (1919) հեռուէն  
ցաւակից ըլլալու անհամեմատ աղէտին, որ ծանրացաւ հայ ժողովրդեան վրայ յետ  
պատերազմեան շրջանին:

Թէրգեանի կաթողիկոսութեան օրերէն երեք դէպք կը ցցուին մեր առջեւ,  
որոնք արժանի են յիշատակութեան: 1911—1912 տարւոյն Սիւնեոյն ի Հոռոմ,  
որ նպատակ ունէր հաստատել եւ սահմանել վարչական եւ հրահանգական կանոն-  
ներ կաթողիկէ հայ Նուիրապետութեան համար: Նոյն նպատակը կը հետապնդէր  
1928 տարւոյն խորհրդակցական ժողովը, ուր որոշուեցաւ նաեւ փոխադրել կաթո-  
ղիկոսական-պատրիարքական Աթոռը Կ. Պոլսէն Բէյրութ: Եւ երրորդ՝ երանաշնորհ  
Տէր Կոմիտաս Բեօմիւրձեանի երանացումս ի Հոռոմ (1929 Յունիս 23):

1929 ին միւսանգամ ձեռք առաւ Թէրգեան կաթողիկոսական-պատրիարքական  
գործերը. փոխադրուեցաւ Բէյրութ. քայց հագիւ երկու տարի վարած իւր առաքելա-  
ջան գործունէութիւնը, զգաց անբաւական իւր ոյժերը, եւ հրաժարեցաւ:

Թէրգեան իւր առանձնական կեանքին մէջ քերաւ երեւան քարի եւ սիրելի  
ընաւորութիւն մը, եւ իբրեւ այսպիսի վայելեց ընդարձակ շրջանի համակրութիւնը:  
Իր հոգեսէր, աստուածամերձ հոգին կը տենչար անդորրութիւն, զոր գնաց վայելելու  
ի Տէր:

Հանգիստ յաիտենական իր հոգւոյն ի լոյս մշտնջենաւոր:

Խոֆրագրութիւն «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ի:

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 12

ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԽԵ. ՏԱՐԻ 1931

## ԵՂԻՅԷ ՎԱՐԳՆՈՅ

ԵՒ ԻԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ԿՆՈՑ ՊԱՏԵՐԱՅԻՆ  
ՔՆՆԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՆ

(Շարունակութիւն):

26. ԹՈՒՐԲ-ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ  
ՆՇՄԱՐՆԵՐ ԵՂԻՅԷԻ ԲՈՎ

Թէպէտ Կայսեր եւ Սաքանի միջեւ  
կնքուեցաւ զինակցութիւն, բայց Թուրքերը  
չբերին զգալի մասնակցութիւն յաջորդ տա-  
րիներու հոռոմէական-պարսկական պատե-  
րագիններու մէջ: Կ'երեւայ թէ բազմահարն  
Սուրով հաճած էր կերպով մը Մեծ Սա-  
քանի՝ Սինջիբուլի կամ անոր յաջորդին  
սիրտը: 573/74ին, երբ գրաւեց Սուրով Դարա  
բերդաքաղաքը, կը պատմէ Յովհ. Եփեսացի  
(2. 7) թէ քրիստոնէայ գերիներէն ընտրեց  
թագաւորը 2000 գեղեցկատեսիլ կոյսեր եւ  
հարսնագգեստ պճնած յանձնեց երկու մարդ-  
պանի, որպէս զի ամենայն զգուշութեամբ  
տանին հասցնեն «Թուրքերուն, որոնք (Պար-  
սից) երկրին խորքերը կը բնակէին», յուսա-  
լով այսու «հաճոյանալ անոնց, ուրախացնել  
գանոնք եւ յինքն յանկուցանել»: Թէպէտ  
կոյսերը ճանապարհին ինքնակամ գետամոյն  
եղան եւ այսպէս վրիպեցաւ Սուրով իւր  
ակնկալութենէն, բայց եւ այնպէս ցոյց կու  
տայ զրոյցս թէ Սուրով արդէն բարեկամա-  
կան յարաբերութեան մէջ է Թուրքերու հետ  
եւ չէր խնայեր միջոց աւելի ամբողջելու  
համար կայր:

Հոռոմէական-թրքական զինակցութիւնը  
անշուշտ այս շրջանի զիւանագիտական մեծ  
յաղթանակներէն մին պէտք է նկատել. եւ  
572ի հայկական աստատմութեան պարա-  
զլուինները հաշիւ ըրած էին անոր վրայ:  
Ուտի շատ անբարոնելի, միանգամայն զար-  
մանալի պիտի նկատուէր, եթէ լռէր Եղիշ  
այս մասին: Բայց չէր լռած պատմագիրը:

Եթէ այժմ սրողուած են իր տողերը, մեղա-  
ւորը Սմբագիրն է, որ Սկզբնագրին հազոր-  
դագրութիւնները աղաւաղած, կեղծած է եւ  
հատակոտոր, վայրավատին ցրուած: Ի մի  
հաւաքելով այս տեղիքներն եւ յեցած Մե-  
նանդրի հաւատարիմ տեղեկատուութեանց  
վրայ հնարաւոր է վերականգնել գոնէ ըստ  
մասնէ Սկզբնագրին միտքը: Փորձենք:

1. Հոն, ուր Ղազար կը պատմէր թէ  
վարդան Մամիկոնեան Սաղխաղի առջեւ  
խորտակելով Պարսից ոյժը յառաջացաւ  
Աղուանից աշխարհը, եղաւ միջամուխ մինչեւ  
ձորայ պահակը, նաեւ գրաւեց զայն եւ պա-  
հակին պահապան կարգեց աղուան վահանը,  
յանձնարարութեամբ որ բարեկամական յա-  
րաբերութիւններ մշակէ անիկա Հոներու  
հետ, կ'երեւայ թէ խմբագիրը գտած է նմա-  
նութիւն Եղիշի Սկզբնագրին մէջ հատուա-  
ծին հետ եւ ի մի ձուլած երկու տեղեկա-  
տուութիւնները: Այս հատուածներն են.

Ղ. Փարպեցի, 66.

Եղիշի, 59.

Եւ հասանէին ի պա-  
հակ որմոյն, որ է ընդ  
մէջ իշխանութեանն Աղու-  
անից եւ Հոնաց. եւ  
գտեալ անդ զպահապանս  
պահակին եւ այլ զօրա-  
կանս պարսիկս բազումս,  
կանս պարսիկս բազումս,  
զօրսն, որ ի ներքս բնա-  
յորոց սուր ի վերայ ե-  
ղեալ կտորէին. եւ զպա-  
հակ կտորէին. եւ զպա-  
հակ յառաջ առնէին քա-  
ղաքագնի միում Աղու-  
անի, որում անուն էր  
անդէն ի նմին տեղաջ  
վահան. եւ գնոյն արձա-  
կէին զեսպան ի Հոնս եւ  
առ այլ ամբականս տե-  
ղեացն, զորս հաւանե-  
ցուցէ միարանել նոցա  
գնդաւ. որոց կամաւ եւ  
յոժարութեամբ զօգնելն  
յաման առեալ՝ հաստա-  
տէին երգմամբ»: